

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏ  
ԱՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

---

# ՃԻՇՏ ՎՈՌՈԳՈՒՄ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻՆ

---

631  
2-25

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՂԻԹՅՈՒՆ

---

ՅԵՐԵՎԱՆ

1937

09 SEP 2013

04 AUG 2010


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈԳԺՈՂԿՈՄՍՏ  
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

631 *uy*  
2-25

1010  
42686

**ՃԻՇՏ ՎՈՌՈԳՈՒՄ  
ԿՈՆՏՆՏԵՍԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻՆ**

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ



1937

1003 83A 40

15275

**ՃԻՇՏ ՎՈՌՈԳՈՒՄ  
ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻՆ**

НАРКОМЗЕМ АРМЯНСК. ССР

Правильное орошение  
колхозным полям

Ամեն մի կոլտնտեսական գիտե, վոր բույսը լավ  
ածոււմ ու լավ բերք է տալիս այն ժամանակ, յե-  
թե ագրոտեխնիկական ձեռնարկումների հետ միասին  
բավականաչափ ջուր ունի:

Բույսն այդ ջուրը վերցնում է հողից:

Չուրը հողի մեջ է ընկնում անձրևի ու ձյունի  
ձևով:

Մեզ մոտ շատ շրջաններում անձրև ու ձյուն  
շատ քիչ է լինում, ուստի և հողում ջրի պակասու-  
թյուն է առաջ գալիս:

Վորպեսզի բույսն աճի, հարկավոր է լրացնել  
ջրի այդ պակասը:

Ջրելը, կամ ինչպես ասում են՝ վոռոգումն է  
լրացնում այդ պակասը:

Ջրելու համար ջուր են վերցնում գլխավորա-  
պես գետերից: Չուրը գետից դուրս են բերում սո-  
վորաբար ջրանցքներով:

Հողում ջրի առանձնապես մեծ պակասություն  
լինում է ամառը, յերբ այնպիսի բույսեր, ինչպես  
բամբակենին և, ամենից ավելի ջրի կարիք ունեն:  
Ամառը մեր գետերը շատ քիչ ջուր են ունենում,  
ուստի այնպես է դուրս գալիս, վոր մենք ավելի  
շատ հող ունենք, քան թե այն վոռոգելու համար  
մեր ջուրը կարող է բավականացնել:

Սորհրդային իշխանությունը միջոցներ է ձեռք առնում ավելացնելու ջրարբի հողերի տարածությունը, ուստի և կառուցվում են նոր, մեծ ջրանցքներ, վերակառուցվում են հները, վորպեսզի կոլտնտեսային և խորհրտնտեսային դաշտերին ճիշտ և եժան վտուգում տան:

Ջրոգտագործողներից պահանջվում է, վորպեսզի վոռոգման ժամանակ ջրի ամենախիստ խնայողություն անեն: Վոռոգման համար ջուրը վորքան խնայողաբար ծախսվի, այնքան ավելի շատ ջրարբի հող կունենանք բամբակենու և այլ կուլտուրաների տակ:

Ջրի խնայողությունը մանավանդ հարկավոր է բամբակենին վոռոգելիս, վորովհետև դա կատարվում է ամառը, յերբ, ինչպես արդեն տավեց, մեր գետերում ջուր քիչ է լինում:

Ջուրը գետից դաշտերն է բերվում ջրանցքներով: Այն ջրանցքը, վորն անմիջականորեն գետից է ջուր վերցնում, կոչվում է մայր ջրանցք կամ, ինչպես ասում են՝ մագիստրալ (գլխավոր) ջրանցք: Նրանից սկիզբ են առնում ավելի մանր ջրանցքներ, վորոնք ջուրը բաշխում են վոռոգվող դաշտի զանազան մասերի մեջ և կոչվում են բաշխիչներ (կամ բաժանաբարներ): Բաշխիչներից ջուր են վերցնում ել ավելի մանր ջրանցքներ, վորոնք ջուրը տանում են վոռոգվող հողամասերը և կոչվում են վոռոգիչներ (կամ ջրման առուներ): Այս բոլոր ջրանցքները միասին կազմում են մի սխտեմ, վոր կոչվում է վոռոգման ցանց կամ վոռոգման սխտեմ: Դաշտերին ճշտիվ և ժամանակին ջուր տալը կախված է բոլոր ջրանցքների, այսինքն՝ վոռոգման ցանցի կանոնավոր աշխատանքից:

Իսկ ինչո՞ւմ է կայանում ցանցի կանոնավոր աշխատանքը:

Նախ՝ վոռոգման ցանցը (ջրանցքները) պետք է այնպիսի դիրք ունենա, վոր կարելի լինի ջուրը վորքան կարելի յե կարճ ուղիով հասցնել ջրվող հողամասը:

Ջուրը ջրանցքներով վորքան կարճ տարածություն անցնի մինչև ջրվող հողամասը, այնքան քիչ ջուր կկորչի հողի մեջ ծծվելով, գոլորշիանալով և ապարդյան դուրս հոսելով (թափումով):

Յերկրորդ՝ մայր ջրանցքից ջուրը դաշտերին պետք է բաշխել քիչ թվով խոշոր բաշխիչ-ջրանցքների միջոցով: Մինչև գյուղատնտեսության կոլեկտիվացումը մենատնտեսների ցանքերը ցրված էյին ամբողջ դաշտում իբրև մանր հողամասեր: Այդ փոքրիկ հողամասերը ջրելու համար ջուրը փոքր առուներով հեռու տեղ էյին տանում:

Հիմա կոլտնտեսականների ցանքերը միացված, մի քանի խոշոր հողամասեր են դարձված և ամեն մեկում ցանվում է առհասարակ մի վորևե կուլտուրա (բույս), որինակ՝ բամբակենի, կամ առվույտ, կամ բանջարեղեն: Դա շատ ավելի լավ է, վորովհետև ջուրը մայր (գլխավոր) ջրանցքից մի քանի խոշոր բաշխիչ-ջրանցքներով կարելի յե տանել կոլտնտեսային մեծ հողամասերը: Իսկ բազմաթիվ փոքր առուներում միշտ ավելի ջուր է կորչում, քան թե խոշոր ջրանցքում:

Սոչոր հողամասերում կոլտնտեսային ցանքերի բաշխումը մեծ նշանակություն ունի այն պատճառով ևս, վոր տրակտորների համար ավելի հեշտ ու

ձեռնառու յե աշխատել մեծ հողամասում, քան թե մենատնտեսի մանր հողամասերում:

Փոքրիկ, կարճ հողամասերում տրակտորն անուգուտ կերպով շատ ժամանակ է կորցնում շուտ-շուտ հետ դառնալու և մի հողամասից մյուսը գնալու վրա: Տրակտորը հեշտացնում ու արագացնում է կոլտնտեսականի դաշտային աշխատանքները և թույլ է տալիս բամբակի ցանքերն ավելացնել անհատ տնտեսութեան մեջ չտեսնված չափերով և դրանով բամբակի նորանոր տոններ է տալիս կառուցվող սոցիալիզմի յերկրին:

Ուրեմն կոլտնտեսային դաշտերում կանոնավոր վոռոգիչ ցանցի կառուցումը հնարավորութիւն է տալիս նախ խնայողաբար գործածել ջուրը, յերկրորդ շահավետ կերպով գործադրել տրակտորը, վորը հեշտացնում ու արագացնում է կոլտնտեսականի աշխատանքը:

Նախկին վոռոգիչ ցանցն սպասարկելիս է յեղեր անհատ տնտեսութեան կարիքները: Խոշոր կոլեկտիվ տնտեսութեան համար վոռոգիչ ցանցն ուրիշ տեսակ պիտի լինի: Ինչպես տեսանք, մայր ջրանցքից ջուրը մեծ կոլտնտեսային հողամասերը պետք է տանել խոշոր բաշխիչ-ջրանցքներով, այդտեղից էլ արդեն փոքր, կարճ առուներով հասցնել ջրվող տարածութիւնը: Ուստի այժմ բոլոր նախկին յեղած վոռոգիչ սիստեմները վերակառուցված ու վերակառուցվում են կոլեկտիվ տնտեսութիւնների կարիքների համաձայն:

Խորհրդային իշխանութիւնը ամայի հողերի վոռոգման հետ միասին մեծ աշխատանք է կատարում նաև կոլեկտիվ տնտեսութիւնների կարիքների համար նախկին վոռոգիչ ցանցը վերակառուցելու վրա:

Այս բոլորն արվում է նախ և առաջ նրա համար, վորպեսզի թանգազին վոռոգիչ ջուրը պահպանվի նոր հողամասեր ջրելու համար, վորը պետութեանը կտա բամբակի նորանոր տոններ և բանվորներին ու գյուղացիներին՝ մանուֆակտուրա (կտորեղեն) և, յերկրորդ՝ նրա համար, վոր վերակառուցվող նախկին վոռոգիչ սիստեմում նոր ջրարբի հողեր ստացվեն. վերակառուցման դեպքում մանր ջրանցքների մեծ քանակութիւն հողով լցնում են և քիչ քանակութեամբ խոշոր ջրանցքներ կառուցում. դրանից թե հողն է ավելանում և թե նոր ջրովի հողի համար ջրի մեծ խնայողութիւն է ստացվում:

Յուրաքանչյուր կոլտնտեսական, պարտավոր է կոլտնտեսութեան բարիքի համար, պետութեան բարիքի համար, իր անձնական բարիքի համար բոլոր ուժերով ոգնել, վոր նախկին վոռոգիչ ցանցը վորքան կարելի յե շուտով վերակառուցվի:

Ելի ինչ է հարկավոր ջրանցքների կանոնավոր աշխատանքի համար, վորպեսզի պակասեցնենք ջրի անոգուտ կորուստը և ջուրը պահենք նոր հողեր ջրելու համար:

Պետք է պահպանել ջրանցքները և նրանց վրայի կառուցվածքները (շյուղ-ջրբաժանները, կամուրջները և այլն) կարգին դրութեան մեջ: Գարնանը ջրելուց առաջ պետք է ստուգել ամբողջ վոռոգիչ ցանցը ծայրից ծայր և կատարել հետևյալ աշխատանքները:

1) Շտկել ջրանցքի ակունքային մասը, այսինքն՝ այն մասը, վորտեղով ջրանցքը գետից ջուր է վերցնում: Հարկավոր է միտը պահել, վոր ջրանցքի ակունքային մասի լավ դրութիւնն ռպահովում է դաշտերին հարկավոր քանակով ջուր տալը:

2) Բոլոր ջրանցքները մաքրել մոլախոտերից, ճյուղերից, քարերից, տղմի ջրաբերուկներից, այսինքն՝ այն բոլորից, ինչը վոր արգելում և դանդաղեցնում է ջրանցքների միջով ջրի անցները:

3) Վոռոգման ցանցում շտկել մի ջրանցքից մյուսը տանող ջրթողները—ջրարգելակները (շուղչները), խողովակները, այլև կամուրջները, այսինքն՝ ցանցի վրայի բոլոր կառուցվածքները: Վոչ-սարքին կառուցվածքներով շատ ջուր է դուրս թափվում՝ անոգուտ կերպով կորչում:

4) Զրվող հողամասերից և բարձրագիր ջրանցքներից ավելորդ ջուրը հեռացնելու համար անհրաժեշտ է հատուկ ջրահեռաց առուներ անցկացնել: Այն ժամանակ ջրվող դաշտից հեռացնելիք ջուրը չէ վողողի ճանապարհներն ու հարևան հողամասերը, այսինքն՝ փաս չի հասցնի, այլ, ընդակառակը, կարելի կլինի ոգտագործել ցածրագիր հողամասերը ջրելու համար:

5) Զի կարելի թույլ տալ, վոր անասունները լողանան և արածեն ջրանցքներում, չի կարելի սայլեր անցկացնել ջրանցքներով, դրանից փչանում են ջրանցքների շեպերը (լանջերը), ճեղքվածքներ (պատրուկվածքներ) են առաջանում և ջուրն անոգուտ, նույնիսկ փաս հասցնելով թափվում է մոտիկ դաշտերն ու ճանապարհները: Անասուններին ջուր տալու և ջրանցքներով անց կենալու համար պետք է ոգտորվել՝ դրա համար հատկապես վորոշված տեղերից:

6) Զրանցքի թմբերը չի կարելի փորել վոռոգվող դաշտը ջուր տանելու համար: Ամեն մի փորվածքից միշտ գուր տեղը ջուր է հոսում, փորվածքը հաճախ թմբերի քանդվելու պատճառ է դառնում:

Զրանցքից ջուրը պետք է դուրս տանել միայն ջրջանային ջրտնտեսութան նշանակած տեղերով:

Վոռոգիչ ցանցի ղննությունը, ջրանցքների և կառուցվածքների վերանորոգումը պետք է կատարել անպայման ջրջրտնտեսութան ղեկավարութայամբ ու ցուցումներով:

Ամեն մի կոլտնտեսական պետք է հիշի, վոր վոչ սարքին վոռոգիչ ցանցը բամբակի նոր տարածություններ ջրելու հնարավորութայան կորուստ է, վոճիր է կառուցվող սոցիալիզմի յերկրի առաջ:

Կանոնավոր վոռոգիչ ցանցը, նրա սարքին պահելը ջրի ամենապակաս կորուստներ է տալիս հողի մեջ ծծվելուց, գորլորշիանալուց և անոգուտ կերպով դուրս թափվելուց:

Կանոնավոր ցանց ունենալով՝ հարկավոր է նայել կարողանալ կանոնավոր կերպով ոգսվել ջրից:

Վոռոգման ջուրը պետք է ճիշտ, պլանի համաձայն բաժանվի առանձին հողամասերի միջև, այսինքն՝ պետք է ջրից ոգտվել պլանային կարգով, պետք է պլանային ջրոգտագործում կիրառել:

Ովքեր և ինչպես են կիրառում կանոնավոր ջրոգտագործումը:

Զրանցքների վրա հսկելու և ջուրը բաշխելու համար ջրջրտնտեսությունը նշանակում է տեխնիկներ և ջրբաշխներ (ջուլարներ): Զրոգտագործողները—տեղական ազգաբնակչությունը—դրանց ոգնելու համար իրենց միջին ընտրում են տեղական ջուլարներ: Տեխնիկներն ու ջուլարներն ամեն բանում յենթարկվում են ջրջրտնտեսութայանը և կոչվում են ջրային աղմի-նխտրացիա: Շրջրտնտեսությունն ամեն տարի ջրի

ոգտագործման պլան ե կազմում յուրաքանչյուր վոտոգիչ սիստեմի համար:

Պլանը սահմանում ե ջրումների ժամկետներն ու նորմերը, այսինքն՝ թե յերբ, քանի ժամով կամ որով և ինչ քանակով պետք ե բաց թողնել ջուրը յուրաքանչյուր հողամասի համար: Ամեն մի ջրման ժամկետներն ու նորմերը վորոշում ե մեքենատրակտորային կայանը (ՄՏԿ) կոլտնտեսականների հետ միասին. քննում են շրջգործկոմները և հաստատում ե Հողժողկոմատը:

Կուլտուրաները ջրելու այդ նորմերից ու ժամկետներից ջրային ազմինիստրացիան ոգտվում ե իր շրջանի համար ջրոգտագործման, այսինքն՝ ջրաբաշխման պլանը կազմելիս:

Պլանը սահմանում ե ջրից ոգտվելու հերթերի խիստ ցուցակ: Բոլոր ջրոգտագործողներին միաժամանակ ջուրը չի բավականացնում, ուստի անհրաժեշտ ե հերթ պահպանել: Յեթե վորևե մեկը խանգարում ե հերթը, ջուր ե վերցնում վոչ իր համար նշանակված ժամկետին, նա վնաս ե հասցնում թե իրեն, թե իր դրացիներին, վորովհեաև ջրոգտագործման պլանը կազմելիս ջրի այնպիսի բաշխում ե սահմանվում, վորպեսզի վորքան կարելի յե խնայողաբար գործածվի ջուրը բոլոր ցանքերի վրա:

Վոտոգման ջուրը խնայողաբար կլինենք գործածած, յեթե պակսեցնենք ջրի մայր ջրանցքից մինչև ջրվող դաշտը հասնելու ժամանակը: Հերթը խանգարելու հետևանքն այն ե լինում, վոր ջուրը նույն առվով հոսում ե ավելորդ անգամ և այդպիսով ավելանում ե նրա անոգուտ կորուստը:

Ջրի ոգտագործման պլանը պետք ե կազմել վաղ

գարնանից, մինչև ջրումների սկիզբը և հասցնել ամեն մի կոլտնտեսականի: Յուրաքանչյուր ջրոգտագործող—կոլտնտեսական, թե մենատնտես—պետք ե գիտենա, թե յերբ, վորքան ժամանակով և ինչ քանակով ջուր ե ստանալու իր վոտոգման հողամասերի համար: Յեթե պլանը ճիշտ ե կազմված և ժամանակին հազորդվել ե ջրոգտագործողներին, այն ժամանակ ամեն մեկը կարող ե վստահ լինել, վոր ջուրն իր դաշտը կգա պլանով վորոշված ժամանակին:

Ամեն մի կայսնեստական յեվ մենասնեստ պարսավոր ե խիստ առաջնորդվել պլանով, հերթը չխանգարել յեվ հետեվել, վոր մյուս ջրոգտայործողները նույնպես կասարեն պլանը:


Այդպես ուրեմն յուրաքանչյուր կոլտնտեսական իր հողամասերը ջրելու համար ջուր ե ստանում պլանով սահմանված ժամանակով:

Վորպեսզի հասցնեն պլանի համաձայն ցանքերի ջրելը, կոլտնտեսականները պետք ե խմանան, թե ինչպես պետք ե ջրել մեծ հողամասերը, այսինքն՝ ինչպես դասավորել ջրողներին:

Վերև ասացինք, թե կոլտնտեսությունների դաշտերն այժմ խոշորացված են, ցանքերը կատարվում են պլանի համաձայն, առանձին խոշոր հողամասերի վրա, վորոնք ջրվում են մշտական վոտոգման ջրանցքներից: Այդ ջրանցքներից ամեն տարի դուրս են բերում ժամանակավոր ջրման առուներ, վորտեղից արգեն ջրում են դաշտերը: Այդպիսի խոշորացված հողամասերն ընդունված ե անվանել քարտեր: Իրանց մեծությունը զանազան ե լինում—3, 5, 8 և ավելի հեկտար: Դաշտի այն մասը, վոր ջրվում ե մեկ ժամանակավոր առվից, ընդունված ե անվանել ջրման

տարածութիւնն: Նայած հողամասի մեծութեանը, բաց թողած ջրի քանակին, ջրման տարածութիւնները գանազան մեծութիւն են ունենում—կես հեկտարից մինչև մեկ հեկտար:

Ստորև բերում ենք առուների սովորական դիրքի գծագրութիւնը:



Բաշխիչ ջրանցքը մայր ջրանցքից ջուրը բերում է դեպի հողամասերը: Բաշխիչ ջրանցքից ջուր են վերցնում մշտական վոռոգիչները:

Սուոր հողամասը պետք է ջրել վորքան կարելի յէ կարճ ժամանակամիջոցում—մեկ-յերկու որում, վորովհետն ջրումից մի քանի (2—4) որ հետո արակտորը պետք է մշակի միանգամից ամբողջ հողամասը բամբակի համար: Յեթե հողամասը ջրվելու լինի մի քանի որվա ընթացքում, ապա արակտորով մշակելը կարելի յէ սկսել այն ժամանակ միայն, յերբ վերջին որը ջրված մասը բավականաչափ չորացած լինի. բայց այդ ժամանակ առաջին որերում ջրած մասը

չափից ավելի չորացած կլինի, հանգամանք, վորը բացասական կազդի բերքատվութեան վրա: Տրակտորով հողամասը մաս-մաս մշակել նույնպէս չի կարելի, վորովհետև արակտորը պետք է իր պտույտներն անի հողամասի վերևում ու ներքևում, վոր հնարավոր է միայն այն դեպքում, յեթե հողամասը ջրված է ամբողջ յերկարութեամբ:

Ուրեմն խոշոր հողամասը (քարտը) ցանկալի յէ վոր ջրվի մեկ-յերկու որում: Ուստի բոլոր ժամանակավոր ջրման առուների մեջ միևնույն ժամանակ պետք է այնքան ջուր բաց թողնել, վորքան հարկավոր է մի ջրողի (մոտավորապէս մեկ բաշ): Վոռոգիչը պետք է այնքան բաշ ջուր բաց թողնի, վորպէսզի մի քանի ջրման առուներ միաժամանակ ջուր ստանան: Բաշխիչը պետք է այնքան ջուր տա, վոր մի քանի վոռոգիչներ կարողանան աշխատել միաժամանակ:

Ամեն մի գործող ջրման առվի վրա բրիգադերը պետք է մի ջրող դնի: Նշանակում է հողամասի վրա այնքան ջրող պետք է դնել, վորքան գործող ջրման առու կա նրա վրա (2—4): Ջրումը շարունակվում է գիշեր-ցերեկ, ուստի պետք է աշխատի ջրողների յերկու-յերեք հերթափոխութիւն, յուրաքանչյուր հերթափոխութիւն 12-ական կամ 8-ական ժամ:

Բրիգադերը պետք է ջուրը հավասարաչափ (մեկական բաշ) բաժանի ջրողների մեջ: Նա յէ հետեվում ամբողջ հողամասի կանոնավոր կերպով ջրվելուն, նա յէ պատասխանատու լավ ջրվելու համար:

Ջրելը պետք սկսել վոռոգիչ առվից ամենից հեռու գտնվող հողամասից (վերջից), վորը կանվանենք 1-ին հերթ. ապա պետք է ջրել 2-րդ հերթը վերջից, 3-րդ հերթը և այլն:

Ջրողը պարտավոր է ջուրը հավասարաչափ բաշխել յուրաքանչյուր ջրման տարածութեան ամբողջ լայնութեամբ: Ջրումը վերջից պետք է սկսել այն պատճառով, վոր յեթե սկսվելու լինի վոռոզիչ առ-վի ամենամոտ մասից, այն ժամանակ հետևյալ մասերը ջրելու համար հարկավոր կլինի ջրված հերթի ջուրը կտրել արդեն թաց հողով (ցեխով), ուստի և առկից ջուրը կարող է միշտ ծորել («պրծներ»)՝ փակած տեղը պատռելով:

Յուրաքանչյուր ջրվող տարածութեան ծայրում վորոշ քանակութեամբ միշտ ջուր կհավաքվի. այդ ավելորդ ջուրը կանվանենք հեռացվելիք ջուր: Վորպեսզի այդ հեռացվելիք ջուրը կանգ չառնի և զուր չկորչի, պետք է այն բաց թողնել հետևյալ ջրման առուն, վորտեղով նա կգնա հետևյալ տարածութեանը ջրելու համար: Հեռացվելիք ջուրը բաց թողնելուն և յերկրորդ անգամ ոգտագործելուն պարտավոր են խիստ հետևել թե՛ բրիգադիրը, թե՛ ջրողը:

Պետք է ամեն մի միջոց ձեռք առնել, վոր հեռացվելիք ջուր վորքան կարելի յե քիչ գոյանա:

Մեծ հողամասեր (քարտեր) ջրելուց վոչ մի կաթիլ ջուր զուր տեղը չպիտի կորչի (մի քիչ հեռացվելիք ջուր կարող է լինել միայն վերջին ջրման տարածութեան մեջ՝ հողամասի ծայրում): Առաջներում փոքրիկ հողամասերը ջրելիս հեռացվելիք ջուրը վողողում եր ճանապարհներն ու հարևան հողամասերը, այսինքն՝ վոչ միայն զուր կորչում եր, այլև մեծ վնաս եր հասցնում:

Բրիգադիրը և ջրողը չպիտի մոռանան, վոր ամբողջ հողամասը (քարտը) պետք է ջրել ըստ հնարավորին մեկ-յերկու որում, վորպեսզի արակտորը կա-

ջողանա հերկել ամբողջը միաժամանակ: Հողամասը մաս-մաս ջրելը թույլատրելի յե միայն իբրև բացառութիւն:

Բրիգադիրը և ջրողը պետք է խիստ հետևեն, վոր վերին տարածութեանից հեռացվող ջուրն ոգտագործվի ներքևի տարածութեանը ջրելու վրա: Իսպախար է թանգագին վոռոզման ջրի վնասակար կորուստների դեմ:

Բրիգադիրը պարտավոր է ջրողների հերթափոխութեաններ դնել ջրման վրա, ջուրը հավասարաչափ բաժանել նրանց մեջ և ղեկավարել ամբողջ հողամասի ջրումը: Նա պատասխանատու յե ամբողջ հողամասի ջրման համար: Ջրող կոլտնտեսականը պարտավոր է իր ստացած ջուրը հավասարապես բաժանել ջրման տարածութեան ամբողջ լայնութեան վրա: Նա պետք է հիշի, վոր միայն այդ պայմանով միատեսակ լավ բերք կստանա ամբողջ վոռոզվող դաշտից:


Ի՞նչպես պե՛տք է ջուրը համաչափ բաժնել ջրման տարածության վրա:

Բամբակենու ջրման հիմնական յեղանակներն են՝ ջրում՝ ակոսներով, ջրում՝ մարգերով և ջրում՝ լճացմամբ: Ամեն մեկը համառոտ նկարագրենք:

### ՋՐՈՒՄ՝ Ա.ԿՈՍՆԵՐՈՎ

Ներկայումս ցանելու համար գործադրվում է շարքացան մեքենա, վորը սերմերը շաղ է տալիս կանոնավոր շարքերով, իրարից հավասար հեռավորութեամբ: Ջրումներից առաջ բամբակենու շարքերի արանքում կուլտիվատորով փորվում են ակոսներ, ուր ջրելու ժամանակ բաց են թողնում ջուրը: Ջր-

ման այդ յեղանակը կոչվում է ջրում՝ ակոսներով, իսկ ակոսները կոչվում են ջրման ակոսներ (գծ. 1):



Գծադիր 1

Ջուրն ակոսներից հողի մեջ է ծծվում վոչ միայն վերից վար, այլև դեպի ակոսների կողերը: Յեթե ճիշտ կիրառվի ակոսներով ջրումը, կստացվի միատեսակ (համաչափ) խոնավացում ամբողջ ջրման տարածության մեջ:

Համաչափ խոնավացում նշանակում է թե ամեն մի առանձին բույս ջրի միատեսակ և բավականաչափ քանակությունն է ստանում: Լավ է ջրման այն յեղանակը միայն, վորը հավասարաչափ խոնավացումն է տալիս:

Ջրման ակոսային յեղանակ գործադրելիս, ինչպես տեսանք, ջուրը հոսում է միայն ակոսները, առանց մնացած դաշտը վողողելու: Բույսերի շարքերին

մոտիկ հողի մակերևույթը ջրով չի վողողվում: Իսկ դա շատ մեծ նշանակություն ունի:

Նախ այն պատճառով, վոր բույսերի շարքերի մոտ գտնվող հողի ջրով չողողված մակերևույթը փխրուն է մնում:


Յերկրորդ՝ հողի մեջ ծծվող ջուրը կարող է գոլորշիանալ միայն ջրման ակոսների մակերևույթից. հողի մնացած չողողված ամբողջ փխրուն մակերևույթը հողի ստորին խոնավ շերտերից ջրի գոլորշիացման առաջն առնում է:

Յերրորդ՝ ջրելուց հետո հարկավոր չէ փխրունացնել ամբողջ դաշտը, այլ միայն բույսերի շարքերի արանքի միջին շերտը: Բույսերի շարքի հողի շերտը փխրունացնելու կարիք չկա, վորովհետև այդ շերտը փխրուն դրության մեջ է մնում:

Այդպիսի փխրունացումը հեշտությամբ է կատարվում կուլտիվատորով (տրակտորային կամ ձիու) առանց բույսին վնասելու, այսինքն՝ ջրման ակոսային յեղանակը թույլ է տալիս կիրառել դաշտերի մեքենայացված մշակում՝ կուլտեսականին ձեռքի ծանր աշխատանքից ազատելով:

Ակոսային ջրման դեպքում վոռոգման ջուր ավելի քիչ է պահանջվում, քան ջրման այլ յեղանակների դեպքում, վորովհետև վողողվում է դաշտի վոչ ամբողջ մակերևույթը, ինչպես վերն ասվեց արդեն: Ակոսային յեղանակը թույլ է տալիս ավելի քիչ ջրման նորմա տալ (այսինքն՝ ջրելու համար ջրի ավելի քիչ քանակություն), վորովհետև այդ յեղանակով ջրելու դեպքում ջրումից հետո հողից ավելի քիչ ջուր է գոլորշիանում, քան ջրման մյուս յեղանակները գործադրելուց, ինչպես հետո կտեսնենք:

28925  
0101



Ամեն մի կոլտնտեսական պետք է միտք պահի ջրման ակոսային յեղանակի հետևյալ գլխավոր դրական կողմերը:

1) Ճիշտ ակոսային ջրումն ավերող ջրման սարածությանը համաչափ խոնավացում է սալիս, վառով բարձրանում է բերքի քանակն ու վառակը:

2) Ակոսային ջրուր պահանջում է ավելի պակաս ջրային նորմաներ (ջրման ջրի քանակություն), քան ջրման մյուս յեղանակները. իսկ վառոգման ջուրը սնեցնելն անհրաժեշտ է բամբակի նոր սարածություններ ջրելու համար:

3) Ակոսային ջրուրը թույլ է տալիս հեջրման մեակման համար ոգտվել կուլտիվացիաներից (սրահսորային յեղ. ձիու), այսինքն՝ կիւտել մեկնայացված մեակում, այդպիսով կուլտնտեսականներին ազատելով ձեռքի ծանր աշխատանքից:


4) Ակոսային ջրման դեպքում ջուրն ավելի լավ է պահպանվում, վառով հեշեղ հողից ջրման ակոսների մակերեսով իջնալով խոնավություն է շնորհում ողի մեջ:

5) Բույսերի արմատների համար անհրաժեշտ ողն ազատ, անընդհատ մուտք ունի հողի մեջ:

## 2. ՋՐՈՒՄՆ ՄԱՐԳԵՐՈՎ.

Մարգերով ջրելու դեպքում դաշտը պատնեշիկներով (թմբերով) բաժանում են մի քանի (2—5) մետր լայնությամբ տարածությունների (զծ. 2-րդ): Ջուրը հոծ շերտով բաշխվում է տարածությունների ամբողջ շերտի վրա և աստիճանաբար ցած (դեպի տարածության ծայրը) հոսելով՝ ձգվում է հողի մեջ:

Հողի ամբողջ հաստության խոնավացումը տեղի յե ունենում գլխավորապես ջրի վերից վառ ձգվելով: Ջուրը վորջան հավասարաչափ է տարածվում հողի տարածության վրա, այնքան համաչափորեն է խոնավանում հողը: Ամբողջ տարածության վրա ջուրը հավասար չափով բաշխելը շատ դժվար է, վորովհետև դաշտի մակերևույթը յերբեք հարթ չի լինում. ցածրադիր տեղերը միշտ ավելի շատ ջուր է գնում, իսկ բարձրադիր տեղերը մնում են անջուր: Ուստի մարգերով ջրման յեղանակը միշտ ավելի պակաս



Գծադիր 2.

համաչափ խոնավություն է տալիս, քան ջրման ակոսային յեղանակը: Դա մեծ պակասություն է:

Ըստ սովորության ջրողները մարգերով ջրումը գործադրում են նաև շարքացանի դեպքում, վոր սրխալ է: Մարգերով կարելի յե ջրել միմիայն այնպի-

սի կուլտուրաներ (բույսեր), վորոնք ցանվում են նեղ շարքերով, ուստի և ջրումից հետո միջշարքային մշակման չեն յենթարկվում:

Այդպիսի կուլտուրաներ են հանդիսանում խոտաբույսերը և հացահատիկները (առվույտը և ցորենը): Մնացած բոլոր դեպքերում անպայման պետք է ջրել ակոսներով:

Մարգերով ջրումն ակոսներով ջրման համեմատությամբ ուրիշ պակասություններ ել ունի:

1) Մարգերով ջրման դեպքում ավելի շատ վոռոգման ջուր է պահանջվում, վորովհետև վողոզվում է հողի ամբողջ մակերևույթը և շատ ջուր է փչանում՝ ցածրադիր տեղերում ներծծվելով ավելի խորը, քան այդ պահանջում են բույսի արմատները:

2) Ջրի գոլորշիացումը տեղի յե ունենում հողի ամբողջ մակերևույթից, ուստի և շատ ավելի շատ, քան ակոսային յեղանակի դեպքում: Ուժգին գոլորշիացման ոգնում է նաև հողի մակերևույթի խտացումը, իսկ գոլորշիացումն ավելի արագ է տեղի ունենում խտացած հողից, քան փխրուն: Հողի չորացումն ել ավելի արագ է կատարվում և ավելի մեծ խորությունից: Ամառն արդեն 2—4 որում, իսկ աշնանը՝ 4—8 որում հողն այնքան է չորանում, վոր կարելի յե մշակել արդեն, այսինքն՝ փխրունացնել հողի վերին շերտը և այդպիսով պակասեցնել գոլորշիացումը: Փխրունացման (կուլտիվացիայի) ամեն մի ուշացում կազված է հողի հետագա արագ չորացման հետ. ամառվա տապ արևի և չոր քամիների ներգործությամբ հողի վերին շերտն արդեն մի քանի որում միանգամայն չորանում է և սկսում ճաքճքել՝ բանալով խոր ճեղքեր, վորոնց միջով ջուրն արագ գոլորշիանում է հողի միջից:

3) Հողի մակերևույթի ժամանակին (ջրումից 2—4 որ հետո) փխրունացնելը պակասեցնում է գոլորշիացումը, ոգնում է խոնավությունը հողի մեջ մնալուն: Բայց ամբողջ ցավը նրանում է, վոր մարգերով ջրման դեպքում պետք է փխրունացնել դաշտի ամբողջ մակերևույթը, իսկ ամբողջ տարածության վրա տրակտորային կուլտիվացիա կիրառել չի կարելի: Շատ ժամանակ և աշխատանք է գնում բույսերի շարքերում հողի շերտը ձեռքով մշակելու վրա:

Ուրեմն այդպես, պե՛տք է հի՛շտ, վոր սարգերով ջրումն ավելի քիչ ձեռնարկ յե, քան ակոսներով ջրումը՝ յե՛վ սարգերով ջրումից կարելի յե ոգսվել միայն վերը նշած բացառիկ դեպքերում (առվույթի, ցորենի ցանքերի վերաբերմամբ):


### 3. ԶՐՈՒՄՆ ԼՃԱՅՄԱՄԲ

Լճացմամբ ջրելու դեպքում վոռոգվող դաշտը բաժանվում է առանձին-առանձին հողամասերի, և հողամասի շուրջը պատնեշիկներ (թմբեր) են կառուցվում: Ջուրը մեծ շիթով (հոսանքով) բաց են թողնում այդպիսի թմբերով պատած հողամասի վրա, վորպեսզի նրա ամբողջ մակերևույթը ջրով ծածկվի, վորպեսզի նա հեղեղվի (գծ. Յ-րդ): Հողի խոնավացումը դեպի խորքը տեղի յե ունենում վերից վար:

Լճացմամբ ջրումը պահանջվում է շատ մեծ ջրման նորմաներ, այսինքն՝ ջրի շատ մեծ քանակ, յերբեմն յերկու և յերեք անգամ ավելի, քան մարգերով և ակոսներով ջրման դեպքում: Լճացմամբ ջրումն ունի մարգերով ջրման բոլոր պակասությունները, այսինքն՝ ջրման տարածության անհամաչափ խոնավացումը, ամբողջ տարածության վրա մեքե-

նայացված, տրակտորային մշակման անկարելիութիւնը, ջրի մեծ կորուստները գոլորշիացմամբ և ավելի խորը ծծվելով, քան թե պետք է բույսերի արմատներին:

Բայց այդ յեղանակից այնուամենայնիվ ստիպված ենք լինում ոգտովել, յերբ անհրաժեշտ է աղիացած հողերը լվանալ:



Գծադիր 3.

Չրման աղոսային յեղանակը պահանջում է ամենափոքր Չրման նորմաներ (վոռոգման ջրի քանակութիւն), լճացմամբ Չրումը պահանջում է ամենամեծ Չրման նորմաներ, մարգերով Չրումը միջին տեղն է բռնում:

Տրվող վոռոգման ջրի միւնույն քանակի դեպքում Չրման յեղանակն ինչպես է ազդում բերքի

քանակի վրա: Փորձերը ցույց են տալիս, վոր վոռոգման ջրի միւնույն քանակը տալուց Չրման աղոսային յեղանակը մոտ մեկուկէս անգամ ավելի յե բերք տալիս, քան լճացմամբ Չրումը:

Բացի այդ, քանի վոր լճացմամբ Չրելու համար պահանջվում է թմբեր կառուցել, վորոնք կազմում են ուղղանկյունիներ, ուր լճացնում են Չուրը, ուստի տարածութեան անոգուտ կորուստ է առաջանում:

#### 4. ԲԱՄԲԱԿԵՆԻՆ ԻՆՉՊԵՍ ՋՐԵԼ ԱԿՈՍՆԵՐՈՎ

Ուրեմն Չրման աղոսային յեղանակը հանդիսանում է ամենաձեռնտուն ու ամենաանտեսողը, և դա պետք է կիրառել ամեն տեղ, ուր վոր հնարավոր է. իսկ այդ յեղանակը հնարավոր է կիրառել ամեն տեղ, բացի աղիացած և ավազոտ հողերից: Ուստի յուրաքանչյուր կուսնտեսական պետք է լավ իմանա, թե ինչպես է կատարվում աղոսային Չրումը:

Մենք արդեն ասել ենք, վոր աղոսային Չրման դեպքում ամեն մի Չրման աղոսի մեջ բաց են թողնում փոքրաքանակ Չուր: Ջրի այն քանակը, վոր բաց են թողնում աղոսի մեջ, մենք կանվանենք աղոսի ջրի ծախս: Վորպեսզի Չուրը հավասարաչափ բաշխենք Չրման տարածութեան վրա, հարկավոր է յուրաքանչյուր աղոսի մեջ բաց թողնել ջրի միատեսակ քանակութիւն, այսինքն՝ ջրի միատեսակ ծախս:

Վորքան շատ է աղոսի ջրի ծախսը, այնքան յերկար պետք է լինի Չրման աղոսը, վորովհետեւ մեծ ծախսն արագ կանցնի Չրման աղոսով և կարճ աղոսներ յեղած դեպքում Չուրը հողի մեջ ծծվելու ժամանակ չի ունենա:

Ուրեմն վերջան շուր պետք է բաց թողնել ակոսը,  
և ինչ յերկարությամբ պետք է շինել շրման ակոսը:  
Փորձերը ցույց են տալիս, վոր պետք չէ ամեն  
տեղ ակոսները միևնույն յերկարությամբ շինել և  
և պետք չէ ամեն տեղ ամեն մեկ ակոսի մեջ շրի  
միատեսակ ծախս բաց թողնել: Ակոսի շրի ծախսը և  
ակոսների յերկարությունը կախված է շրվող հողա-  
մասի թեքությունից ու հողից:

Ինչ բան է թեքությունը:

Ջրման ժամանակ ընդունված է թեքություն-  
ները համարել ուժեղ, միջակ և թույլ: Յեթե հողա-  
մասը գտնվում է մեծ անկում ունեցող զառիվայր  
տեղ, այդ դեպքում ասում են, թե հողամասն ուժեղ  
թեքություն ունի: Ավելի ճիշտ կարելի յե այսպես  
ասել. յեթե հարյուր մետր յերկարություն ունեցող  
հողամասն ունի մեկ մետրից ավելի անկում, այն  
ժամանակ թեքությունն ուժեղ է:

Յեթե հողամասը գտնվում է փոքր անկում ունե-  
ցող գրեթե հարթ վայրում, այն ժամանակ ասում են,  
թե հողամասը թույլ թեքություն ունի: Ավելի ճիշտ  
կարելի յե այսպես ասել. յեթե հարյուր մետր յեր-  
կարությամբ հողամասն ունի 10—20 սանտիմետրից  
պակաս անկում, ապա թեքությունը թույլ է:

Խիստ և թույլ թեքությունների մեջտեղը միջակ  
թեքություններն են. յեթե 100 մետր յերկարու-  
թյամբ հողամասն ունի մեկ մետրից պակաս և 20  
սանտիմետրից ավելի անկում, ապա թեքությունը  
միջակ է:

Յերբ ինքը կոլտնտեսականը չի կարողանում վո-  
րոշել, թե ինչ թեքություն ունի հողամասը, պետք է  
գիմի ՄՏԿ-ին և շրջրանտեսությանը՝ բացատրություն  
ստանալու համար:

Ակոսի շրի ծախսերը և ակոսի յերկարությունը  
կախված են վոչ միայն թեքություններից, այլև  
հողամասի հողից: Հողերն ել կարելի յե յերեք խմբի  
բաժանել:

Ճանր կախախան, վորոնք դանդաղ են ծծում  
շուրը:

միջակ, վորոնք ավելի արագ են ծծում շուրը:  
թեթև, ավազոտ, վորոնք շուրն արագորեն անց  
են կացնում իրենց միջով:

Յեթե ինքը կոլտնտեսականը չի կարողանում  
վորոշել, թե հողամասի հողն ինչպիսի յե, պետք է  
գիմի ՄՏԿ-ի գյուղատնտեսին, բացատրություն ստա-  
նալու համար:

Ճանաչելով հողամասի թեքությունն ու հողը,  
արդեն հեշտ է վորոշել ակոսի շրի ծախսը և շրման  
ակոսների յերկարությունը:

Յեթե հողամասը միջակ թեքություն և ծանր  
հող ունի, այն ժամանակ հարկավոր է մի բաշ շուր,  
վորը՝ ինչպես արդեն գիտենք՝ բաց են թողնում շրման  
առվի մեջ, հավասարապես բաշխում 20—25 ակոսի  
վրա, և ակոսներն ունենում են 150—200 մետր  
յերկարություն:

Յեթե հողամասն ունի միջակ թեքություն և  
միջակ հող, պետք է շրման առվից մի բաշ շուր հա-  
վասարապես բաշխել 30—35 ակոսների վրա, վորոնք  
պետք է ունենան 100—150 մետր յերկարություն:

Յեթե թեքությունը միջակ է և հողը թեթև,  
պետք է միաժամանակ վորոգվող ակոսների թիվն  
ել ավելացնել, իսկ ակոսների յերկարությունը պա-  
կասեցնելով՝ հասցնել 80—100 մետրի: Խիստ թեքու-

Թյուն ունեցող հողամասերն ակոսներով ջրելը դժվար է, վորովհետև ամեն մի ակոսի մեջ պետք է բաց թողնել շատ փոքր ծախս (ջրի քանակ): Յեթե խիստ թեքոթյուն ունեցող ակոսի մեջ բաց թողնենք մեծ ծախսեր, այն ժամանակ ջուրն արագութեամբ կընա ակոսը և հողի մեջ ծծվելու ժամանակ չի ունենա:

Ուստի ջրման ակոսները պետք է թեք կերպով ուղղել դեպի վայրի թեքությունը (անկումը) կամ ինչպես ասում են՝ շեղ (թեք) ակոսներ շինել:

Ջրման ակոսները պետք է շինել բամբակը ցանելու հետ միաժամանակ, վորովհետև մեզ մոտ, շրջանների մեծ մասում ջրում են ցանելուց հետո: Այդ նպատակով մեզ մոտ ՄՏԿ-ներն ակոսիչներով սերմնացան մեքենաներ են շինել, վորոնք ցանելու հետ միաժամանակ ակոսներ են պատրաստում: Հետագայում, ամեն անգամ յուրաքանչյուր ջրումից առաջ, անհրաժեշտ է կուլտիվատորով բաց անել ակոսները: Կուլտիվատորով բացած այդ ակոսների խորությունը պետք է լինի 15 սանտիմետրի սահմաններում:

Այն շրջաններում, ուր ընդունված է ցանքային ջրումը կատարել նախքան ցանելը, այսպես կոչված՝ «արաթ» անել, ցանքը կարելի յե կատարել սովորական սերմնացաններով, առանց ակոսիչների: Հետագայում, բամբակենու աճման ժամանակ ջրելիս, հարկավոր է նույնպես ամեն մի ջրումից առաջ կուլտիվատորով ակոս բաց անել:

Այնտեղ, ուր բամբակենու ցանքը մարգերով է կատարված, անհրաժեշտ է ամառը ջրելիս անցնել ակոսային ջրումների, դաշտի մշակման ժամանակ աշխատելով վոջնացնել մարգերը՝ փոխարինել այդպիսիները միջարքային տարածությունում՝ ակոսներով:

Ջրման այդպիսի յեղանակի, այսինքն՝ վայրի թեքութեամբ ընկած մանր ակոսների ջրման դեպքում վորոգման ջրի մասնակի հեռացվելիք քանակն անխուսափելի յե: Այդ հեռացվելիք ջրերը պետք է հավաքել՝ ինչպես վերը նշեցինք՝ հետևյալ ջրման առվի մեջ ցածրադիր դաշտը վորոգելու համար:


Ինչպես մեր ասածից հասկանալի յե, բոլոր դեպքերում ակոսներով ջրումը կատարվում է դաշտի թեքության ուղղութեամբ:

Բայց ամենուրեք կան հողամասեր, ուր թեքությունները շատ թույլ են, ուր կուլտիվատորի շինած մանր ակոսներով ջրելը դժվար է, վորովհետև ջրելու ժամանակ ջուրն ուռչում է ակոսում, անցնում ակոսի յեզրերով և վորողում է ամբողջ դաշտը, այսինքն, ստացվում է լճացմամբ ջրումն: Դա սնթուլատրելի յե: Ուստի թույլ թեքություն ունեցող հողամասերում պետք է ուրիշ ակոսներ շինել, այսինքն՝ մանր ակոսների փոխարեն պետք է շինել խոտ յեվ բուք ակոսներ, այսպիսի ակոսներ, վորոնք դաշտի ծայրում փակ լինեն և ջուրը դուրս չթողնեն (գծ. 4-րդ): Այդպիսի յեղանակով դաշտը ջրելիս պետք է ակոսները մինչև վերջը ջրով լցնել, և հենց վոր նրանք կլցվեն, ջրումն ընդհատել: Բուք և խոտ ակոսները պետք է շինել բուկլիցով կամ լիստերով: Իրանց խորությունը պետք է սկզբում հասցնել 18—22 սանտիմետրի. ակոսի լայնությունը (վրայով) պետք է լինի մինչև 30 սանտիմետր՝ դեպի ցածն աստիճանաբար նեղանալով:

Հետևյալ հերթական ջրումից առաջ պետք է կուլտիվատորով վերականգնել ջրման ակոսները: Հաշվի առնելով, վոր յերրորդ ջրումից հետո բամբա-

կենին այնպիսի զարգացման ե հասնում, յերբ փակվում են նրա շարքերը և անկարելի յե լինում ակոսները վերականգնել, անհրաժեշտ ե յերրորդ շրումից առաջ ակոսների վերականգնումը կատարել խնամքով և մեծ խորությամբ:

Վերջին շրումների ժամանակ բամբակենու շարքերը փակվելուց հետո ակոսների խորությունը կպա-



Գծապիւր 4

կասի: Այդպիսի ակոսների յերկարությունը պետք ե լինի՝ հողին նայած՝ հետևյալը. ծանր, կավախառն հողում, վոր շուրը դանդաղ ե ձծում, 80—120 մետր. միջակ հողում, վոր շուրն ավելի արագ ե ձծում, — 60—80 մետր. խակ թեթև, ավազախառն հողում, վորն իր միջով շուրն արագ կերպով անց ե կանցում, ակոսի յերկարությունը պետք ե լինի 30—40 մետր: Խոր, բուխ ակոսներով շրման ժամանակ մի բաշ շրով միանգամից կարելի յե շրել 20—25

ակոս՝ շուրը համաչափ բաշխելով ակոսների վրա: Ջրման այդ յեղանակով մի բաշ շրով մեկ հեկտար բամբակը կարելի յե շրել 8 ժամում: Ջրումն առանց հեռացվելիք շրի կկատարվի՝ տարբերվելով թեքության վրա մանր ակոսներով շրումից:

Խոր, բուխ ակոսներով կարելի յե շրել նաև միջակ և նույնիսկ ավելի խիստ թեքություն ունեցող հողամասեր, բայց այն պարտադիր պայմանով, վոր բամբակը ցանված լինի վոշ դաշտի թեքության յերկայնքով, այլ նրա լայնքով: Այն ժամանակ բամբակի շարքերի ուղղությամբ շատ թույլ թեքություն կստացվի և կարելի կլինի դաշտը շրել բուխ, խոր ակոսներով:

Ինչպես և դաշտի թեքությամբ մանր ակոսներով շրումը, խոր, բուխ ակոսներով շրումն ել ե հանդիսանում շրման այն յեղանակը, վորը նպաստում ե թե բերքատվության բարձրացման և թե շրման շրի տնտեսման: Ամեն սեղ, ուր հնաբավոր ե դա, պետք ե ոգտվել ջրման այդ յեղանակից:

Պետք ե հիշել, վոր շրման ակոսային յեղանակի դեպքում հնարավորություն կա բամբակենու շրումների ավելի մեծ քանակ տալու, քան շրման մյուս յեղանակների դեպքում, վորովհետև այդ յեղանակով ամեն անգամ շրելուց ավելի պակաս շուր ե հարկավոր, քան ուրիշ յեղանակով շրելուց: Իսկ ամեն անգամ փոքր շրով, բայց հաճախակի շրելը, ինչպես այդ ապացուցել են մեր ստախսնովականները, վճռական նշանակություն ունի բերքի բարձրացման գործում:

Ակոսներով շրման դեպքում բրիգադիլը պետք ե վոշ միայն շուրը բաժանի շրողների մեջ, ինչպես

ասվից, այլև նա պետք է սահմանի յուրաքանչյուր տարածութեան վրա միաժամանակ ջրվելիք ահոսների թիվը:

Ջրողը պետք է ջուրը հավասարաչափ բաժանի ջրման առվից այն բոլոր ահոսների վրա, վորը ցույց կտա բրիգադիւրը, և պետք է հետևի ահոսներում ջրի կանոնավոր ընթացքին:

Այս ցուցումները պահպանելով՝ կարելի յե կատարել կանոնավոր ահոսային ջրում, վորը բավականաչափ և համաչափ խոնավացում կտա հողին:

Այս բոլոր ցուցումները միաժամանակ կիրառելի յեն թե կոլանտեսությունների և թե խորհանտեսությունների համար:

Ջրողների անհատութեան ղեպքում ՄՏԿ-ների գյուղատնտեսները պարտավոր են սկզբում անձամբ ղեկավարել ջրումները, իսկ հետագայում մշտական բացատրությունների միջոցով լուծել բոլոր ծագող դժվարությունները:

Ահոսներով ջրումը, ինչպես նաև ջրման մյուս յեղանակներով ջրումը, պետք է կատարել որուզիչեր, անըզնդհատ: Բամբակը գիշերը ջրելով՝ կոլանտեսականներն ոգտագործում են ջրանցքով զուր հոսող ջուրը: Բամբակը գիշերը ջրելուց պետք է նույնպես աչալուրջ հսկել, ինչպես և ցերեկը: Հաշվված է, վոր այն տարածությունը, վորը կարելի յե ջրել գիշերը, բամբակի ցանքն ավելացնում է 15—20 տոկոսով: Իսկ դա նշանակում է, վոր գիշերային ջրումը պետութեանը տալիս է հավելյալ բամբակ, իսկ աշխատավորներին, գյուղացուն ու բանավորին՝ կտորեղեն:

Կանոնավոր ահոսային ջրումը բամբակին բավականաչափ ջուր է տալիս և ջրի կորուստն այդ ղեպ-

քում նվազագույն կլինի. ավելորդ ջրի վատնում չպիտի լինի, վորովհետև տրվում է բույսերին անհրաժեշտ ջրի այն քանակը (ջրման նորմաները), վոր փորձնական ճանապարհով սահմանված է տվյալ ջրջանի համար:

Ջրի ավելորդ վատնումն ինչն յե վնասակար:

Ջրի ավելորդ քանակը վատացնում է հողի վորակը, բերքը տարեց-տարի պակասում է:

Ջրի ավելորդ առատությունից կարող են ճահիճներ գոյանալ և հողն անպետք կգառնա ցանելու համար, բացի այդ, ճահիճը նպաստում է մալարիայի տարածվելուն:

Ջրի հավելուրդից հողերը կարող են աղիանալ: Ավելորդ ջուրը հողի խորքն անցնելով՝ միանում է ստորերկրյա աղի ջրին. աղի ջուրը վեր է բարձրանում և գոլորշիանալով՝ հողի մեջ թողնում վնասակար աղեր: Աղիացած հողերն արդեն պիտանի չեն ցանելու համար:

Կոլանտեսականները՝ բրիգադիւրն ու ջրողը պետք է հիշեն, վոր այդ բոլոր աղեսները հանդիսանում են վոռոգման ջրի անկանոն ոգտագործման հետևանք, անկանոն վոռոգման հետևանք:

Այն բոլորի, ինչի մասին մինչև այժմ խոսել ենք,—ստորին վոռոգիչ ցանցը (ջրանցքները), պլանով ջրոգտագործումը, կանոնավոր կազմակերպված ահոսային ջրումը, —այդ բոլորի հիմնական նպատակն է վոռոգման ջրի խնայողաբար (տնտեսաբար) ոգտագործումը և մեծ բերք ստանալը: Քանի վոր մենք վոռոգման ջուր քիչ ունենք, ուստի անհրաժեշտ է լուրջ միայն տնտեսաբար ոգտվել ջրից, այլև այդ ջուրը (խոնավությունը) պահել հողի մեջ:

Հայտնի է, վոր ամառվա այրող արևի և չոր

քամիների ներգործութեան առկ խոնավութեանն ինչ-  
պես և արագ գոլորշիանում հողի միջից: Մենք գիտենք  
վոր ժամանակին կատարվող մակերևութային փխրու-  
նացումը խիստ դանդաղեցնում և գոլորշիացումը,  
այսինքն՝ խոնավութեան կորուստը: Զրուաները և ջրու-  
մից հետո կատարվող մշակումը—փխրունացումը  
սերտորեն կապված են իրար հետ:

Կոլսնեստականները հետեվելով ջրի ոգսագործման  
պլանին՝ նույնպես խիստ կերպով պեժ և պահպա-  
նեն ջրելուց հետո կատարվող մշակման ժամկետները:

Կոլսնեստակա՛ն: Կատարելով այսեղ սրված բոլոր  
ցուցումներ՝ դու բարձր բերք կստանաս, վոռոզման  
արժեքավոր շատ ջուր կինայես. իսկ խնայված ջուրը  
հնարավորությու՛ն կհա ջրելու նոր հարյուրավոր ու  
հազարավոր հեկտար բամբակ, վոր անհրաժեշտ և  
սոցիալիստական շինարարության յերկրին:

Միայն խորհրդային իշխանութեան թշնամին և  
շապարեն վարվում վոռոզման ջրի հետ:

Խմբ՝ Ինժ. Ա. Սարգսյան

Քարգմ.՝ Ա. Աթայան

Տեխ. խմբ. և սրբազրիչ՝ Պ. Այվազյան

Դրավիտի լիազոր № 1186, հրատ. 435 պատ. 346, տիրամ 3000

Հանձնված և արտադրութեան 19 մայիսի 1937 թ.

Ստորագրված և տպագրելու 10 հունիսի 1937 թ.

Դյուզըբատի տպարան, Յերևան, Նալբանդյան 11

« Ազգային գրադարան




NL0282099

298

15275

Գ Ի Ե Ը 30 Կ.



НАРКОМЗЕМ АРМЯНСК. СССР

Правильное орошение  
копковным полям